

դաքն ի Բարիզ (Paris) Դեկտեմբերի ԺԹ :» : Այստեղ իր ուղեկիցը, Վրթանէս սարկաւազն այլ եւս չէ ուզում նրա հետ ճանապարհորդել, ըստ երեւոյթին, եւ նրանից բաժանում է : Մարտիրոս Պարխում միայն 13 օր է մնում, որը նկարագրում է նոյնպէս չափազանցօրէն եւ ապա անվճատ շարունակում է իր ուխտադնացութիւնն Եւրոպայի միւս նուիրատեղիները, կամաց կամաց եւ հետադարձ : Նա օրերով դադար է առնում իր հանդիպած քաղաքներում : Այսպէս ամիսներ ճանապարհորդելով Գաղղիայից մտնում է Սպանիա եւ իջեւանում է նախ Սան Սեբաստեան ծովափերէն քաղաքը : Սպանիացիք նրան հիւրընկալում են տեղական հիւրանոցում, որը նա սպիտակ է կոչում եւ երբ լսում են նրա ուխտաւորի հանգամանքը եւ կարօտ վիճակը, նրա համար փող էլ են հաւաքում : Մարտիրոս իր գլխաւոր նպատակներից մէկին է հասնում երբ այցելում է եւ երկրպագում ծնկաչօք՝ «Ս. Յակոբի գերեզմանին» եւ «Պօղոս առաքելի ձեռքով կառուցուած Սանթա Մարիա Փենիտէնցիա եկեղեցուն», ինչպէս գրում է : Այս սպանիական «Սուրբ Յակոբը» նրա պաշտպան սուրբն է, որին միշտ օգնութեան է կանչում իր ուղեւորութեան ժամանակ :

Հայ անվախ եպիսկոպոս-ուխտաւորը՝ այս երկար, առանձին եւ հետիոտն ճանապարհորդութիւնից վերջապէս յոգնում է եւ սկսում է դանդաղել ոչ միայն յոգնածութիւնից այլ եւ իր ունեցած վտանգալից արկածներից, որովհետեւ մի տեղից միւս տեղ անցնելիս նա երբեմն այնպիսի ամայի վայրերով է գնում, որոնց միակ բնակիչները վայրի գազաններ են լինում : Այս կերպով նա հանդիպել է նաեւ վագրների⁷ բայց յաջողում է խոյս տալ նրանցից :

Մարտիրոս Սպանիայում պատահում է «Վիլվալ» (Bilbao), բայց ժողովրդի քաղաքը եւ այնտեղ 3 օր հանգստանալուց յետոյ 27 օր շարունակ քալելով գալիս է Ովկիանոսի ծովափերէն վրայ «Կեթարիայ օրհնեալ քաղաքն», ուր բոլորովին նոր տեսակի ուղեւորութեան է ձեռնարկում : «Այստեղ, գրում է Սէն Մարտէն, Մարտիրոս՝ ուխտաւորների կարգից

զուրս գալով, բարձրանում է վեր. ուստի նրա պատմութիւնը աւելի եւս շահեկան է դառնում» : Մարտիրոս Սպանիայի այդ ծովափերէն էր եկել այն ժամանակ երբ ամէնքը հետաքրքրուել էին Քր. Կոլումբոսի տարի ու կէս յառաջ կատարած տարօրինակ նաւագնացութիւնից : Նա նոր էր եւս դարձել իր առաջին յանդուգն ծովային խուզարկութիւնից «դէպի արեւելք» եւ նոր ցամաքի (Ամերիկայի) գիտն այնպէս էր յուզել եւ ընդհանուր նախանձ շարժել, որ մի խումբ սպանիացիք որոշել են նրա օրինակին հետեւելով նոյնպէս երկրախոյզ դառնալ : Մարտիրոսի պատմութիւնից երեւում է, որ նրանք արգէն իրենց առաջատանաւն էլ պատրաստել են Բիսկայի ծովածոցում (Biscaye, սպանիէն Vizcaya), երբ Մարտիրոս գալիս է այնտեղ : Այս նաւը նրա ասելով 80,000 քանթար (quintal) տարողութիւն է ունեցել : Մեր հայ եպիսկոպոսն երբ այդ տեսնում է, ցանկութիւն է զգում մասնակցելու սպանիական այս նաւագնացութեան եւ նա խնդրում է տեղւոյն քահանայից, որ միջնորդէ նաւապետի մօտ, որ նրան եւս հետը տանի : Նա պատճառ է բերում թէ ինքն հետիոտն երկար ճանապարհորդութիւնից սաստիկ յոգնել է եւ պէտք է զգում հանգստանալու : Քահանաները համաձայնում են եւ Մարտիրոսին տանում են նաւ : Նաւապետին համոզելու համար էլ նրան կարգում են Հոոմի պապի յանձնարարականը : Նաւապետը՝ պապի յանձնարարականը լսելուց յետոյ ասել է. «Մենք մեր կեանքը զոհ ենք բերում մի գաղափարի համար. մեր միակ յոյսը Աստուած է. պիտի չըջնիք ամբողջ աշխարհը. չենք իմանում թէ հովը ո՞ր կողմից կը փչէ : Ուզո՞ւմ ես մեզ հետ գալ, եկ, կը տանինք. մենք էլ քահանայի պէտք ունինք. դու մեր հոգու մասին մտածիր, մենք էլ քո սպրուստը կը հոգանք» : Մարտիրոս ուրախութեամբ ընդունում է այս առաջարկութիւնը : Քաղաքում լուր է տարածում թէ «հայ ուխտաւոր կրօնաւորը» միանում է սպանիացի նաւագնացներին եւ ժողովուրդը յօժարակամ հոգում է Մարտիրոսի ուտելիքը. ամէն կողմից մեծ քանակութեամբ պաշար են բերում նրա համար :

1494 Ապրիլի 8, երեքշաբթի օր էր երբ այս նորօրինակ հայ նաւագնացը սկսում է իր ծովային ուղեւորութիւնը : Նրա նաւը ամբողջ 68 օր թափառել է Ատլանտեան Ովկիանոսում. այնքան սաստիկ փոթորիկներ է

⁷ Մարտիրոսի Յիշատակարանում կամ աւելի ճիշդ նրա ընդօրինակութեանը մէջ, այս բառը գրուած է վաճկնք : Գաղղիացի թարգմանիչը Սէն-Մարտէն չէ կարողացել հասկանալ թէ «վաճկնք» ինչ տեսակ գազան է եւ թողել է չթարգմանալ : Պարզ է որ այս բառը պէտք է կարգաւ «վագրէն» :

նա կրել, որ ամէն կողմից վնասուել է եւ ստիպուել է ցամաք մօտենալ, որ նորօրինակութիւններ կատարէ, որպէս զի կարենայ շարունակել : Մարտիրոսի ասելով նրանք իջել են մի շատ գեղեցիկ փոքր քաղաք, որի անունը նա չէ տալիս, բայց Սէն Մարտէնի հաշուով, պէտք է որ Կադիքսը (Cadix) լինի : Այս 68 օրուան վտանգալից եւ յոգնեցուցիչ նաւարկութիւնն այնքան անհանգստութիւն է պատճառում հայ եպիսկոպոս-ուխտաւորին, որ նա այլ եւս չի վերադառնում նաւ եւ որոշում է ցամաքով եւ հետիոտն եւս դառնալ : Նա գալիս է նախ Սեվիլի կամ ինչպէս նա է գրում Սերիլիա, ուր նա պատահում է Սպանիոյ Իդարելլա մեծ թագուհուն : Այնուհետեւ լեռ ու դեռ անցնելով նա հասնում է «Վալբէր» ցիլիներին (նախկին Մարոքցիներին) քաղաքը «Գրիլիան» (Գրանադա) : Կամաց կամաց յառաջանալով եւ հանդիպած սպանիական քաղաքներում երբեմն մէկ շարաթ, երբեմն աւելի հանգստանալով, մտնում է «Պարսալոն» (Barcelone), որ նրա ասելով 90-000 տուն է ունեցել, որ ի հարկէ չափազանցութիւն է : Այս անգամ նա մինակ չէ եղել. մի բժիշկ ուղեկից է ունեցել որ մեծապէս օգտակար է հանդիսացել որովհետեւ Մարտիրոս տառապել է աղիքների հիւանդութիւնից : Այսպէս ուղեւորուելով նա անցել է Կատալոնեան, կտրել է հարաւային Փրանսան Կաթալոնեան, կտրել է հարաւային Գրանադան եւ մեծ դժուարութիւններ կրելով եկել է ձիւնիվեզ, որ Ջենովա (Genes) իտալական նաւահանգիստն է : Այդտեղ նա կամեցել է նաւը ստիլ Փոքր Ասիա իր հայրենիքը վերադառնալու համար : Բայց տեսնելով, որ ծոփն ալեկոծեալ է, թողել է այդ միտքն եւ դարկոծեալ է, թողել է այդ միտքն եւ դարձեալ հետիոտն յառաջանալով վերջապէս 1496 փետրուար 20ին կարողացել է հասնիլ Հոոմ, երբ Մեծ Պահլէն սկսել է : Այն տեղից դնացել է մերձակայ նաւահանգիստն, որը նա «Սանթա Մարիայ» է կոչում որ հաւանականաբար Օստիա քաղաքն է, որի մայր եկեղեցին այդ անունն է կրում : Այստեղ նա գտնում է յարմար նաւ եւ վերադառնում է Փոքր Ասիա, մար նաւ եւ վերադառնում է Փոքր Ասիա, սարսափելի կերպով յոգնած ու տանջուած իր բազմամեայ արկածալից ուղեւորութիւնից :

(Վերջ :)

ՍԱՐՈՒՆԱՆ



ԺԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ՍՏԵՄԳՈԼՈՅ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ
ԵՐԵՄԻԱ ԶԷԼԵՊԻՒՔԵՍԻՐՃԵԱՆ

(Շարունակութիւն :)

Ս. Կարապետ Եկեղեցւոյն առջեւէն դէպի հարաւ յառաջանալով կը հասնինք Քաղկեդոն ծովափերայ զիւղը, բայց նախ անցնելու է Գառաճա-Ահիւէտ¹⁴⁹, Սելիւսիէ ու Հայտարբաշա կոչուած զուտ թրքաբնակ թաղերէն :

Երեմիա Չէլէպի իւր Հիւր Վարդապետը պտտցնելով ցոյց կու տայ անոր՝ Իւսկիւտարի ծովահայեաց գեղեցիկ տեղերը եւ զայն կ'առաջնորդէ նախ Հայտարբաշա, որուն համար կը գրէ .

Տող 183 եւ 184 .

«Այլ յատաջ եւս արբունի՝
կոչեցեալն հայտար փաշան¹⁵⁰,
Ասեմ կոստանդիայ պալատ՝
Ուր սուրբ հարբն ժողովեցան» :

Ինչպէս կը տեսնենք, Երեմիա Հայտարբաշա վայրը նշանակած պահուն. «Կիրսուի քէ»՝ կը գրէ . «Կոստանդիանոսի Պալատը այս տեղ էր, եւ քէ հոն սուրբ Հայրերը ժողով գումարեցին» : Այս մասին Սարգիս Դպիր Սարաֆ-Յովհաննէսեան ալ իր Պոլսական Պոռնոյսին մէջ կը գրէ հետեւեալը .

«Եւ այլ յառաջ երթեալ՝ զոյ արքունի տեղի մի հարթագետին, որ կոչի Հայտարբաշա, յանուն միոյն ի վեղիրացն Սուլթան Սիւլէյմանին առաջնոյ :

«Ասեմ թէ՛ անդ էր ի հնունն Պալատ մի՝ Մեծին Կոստանդիանոսի» :

Թէ՛ Երեմիայի եւ թէ՛ Սարգիսի գրածները երկրայական են, զի որոշապէս չեն յայտնել, թէ Հայտարբաշայի ո՞ր կողմն էր Կոստանդիանոսի Պալատը : Իսկ Երեմիայի 184րդ տողին մէջ յիշատակուած ժողովը,

¹⁴⁹ Գառաճա-Ահիւէտ տեղին անունը նշանակած պահուն, միտքս կու գայ, որ ասեմ մը այդ զուտ թրքաբնակ թաղին մէջ, թուրքի մը տունը փոխադրեց՝ «Մանգուսի Էֆեար» հայատառ թրքերէն թերթին խմբակը Կարապետ Փանոսեան, իր հաստատած համուն գիւղերովի մանչերու վարժարանը, որ երկար կեանք չունեցաւ, ինչպէս եւ իր «Ազգայեան» աղջիկներու գիւղերովի Դպրոցը, զոր 1869 Յունուարին բացու Սամաթիա թաղին մէջ, բաւական մեծ ազմուկ յարուցանելով Ազգին մէջ :

¹⁵⁰ Հայտարբաշայի երկաթուղոյ կայարանէն էր, որ 1915 Ապրիլ 11/24ի գիւղերը՝ 250 Հայ մտաւորականները առաջնորդուեցան դէպի արսոր եւ դէպի սպանդ :

Նիկիոյ ժողովն է որ Կոստանդինոս կայսեր հրամանաւ զուժարուած է 325 թուին եւ որուն մասնակցած է մեր Արիստակէս Հայրապետը եւ «Հանգանակը» տարած է Հայաստան¹⁵¹:

* * *

Երեմիա վերոյգրեալ տողերուն յաջորդաբար կը յաւելու հետեւեալները ըսելով. Տոյ 186.

«Այլ յառաջ Գատի քէոյն է,
Ուր տանիկի եւ յոյնք բնական
Սորա ասի Հալգէտոսի՝
Պղնձի քաղաք է քարգման.
Չարորդ ժողովն աստ եղել՝
Այազմայք ընդ նմին քիլիսան»:

Հայտարարւոյն Գատըզիւզ կ'իջնայ Երեմիա Չէլէպի, բայց Հայերու խօսք չ'ընէր հոս, եւ կը բաւականանայ յիշատակելով Քաղկէդոնի նշանաւոր ժողովը (Չորրորդը), որ տեղի ունեցած է 451 թուին:

* * *

Սարգիս Դպիր Սարաֆ-Յովհաննէսեան իւր Պոլսական Տեղագրութեան մէջ Գատըզիւզի մասին գրած ժամանակ կը յիշատակէ հոն Հայեր ու Հայ Եկեղեցի՝ ըսելով.

«Եւ զկնի սորա՝ է Գիւղն այն՝ որ կոչի Գատըքէոյի, ուր բնակին տանիկի եւ յոյնք, եւ սակաւիկ Հայք: Եւ է անուն տեղւոյս յունարէն իսպիտոսն, եւ ըստ Հայոց Քաղկէդոն: Եւ ի մէջ քաղին փոքր Եկեղեցի մի Հայոց, հնացեալ յոյժ եւ խարխուլ յանուն Սուրբ Աստուածածնին»:

Որոշապէս յայտնի չէ թէ ե՞րբ հաստատուած են այս տեղ Հայեր ու ե՞րբ ունեցած իրենց Եկեղեցին:

Առանց հեռանալու բիւզանդական կայսրութեան օրերէն, ո՛ր ատեն Քաղկէդոն ունէր Հայ բնակչութիւն՝ հարկաւ փոքրաթիւ, ինչպէս ցոյց կու տայ Պատմութիւնը, եւ կ'ընդունիմ թէ Երեմիա Չէլէպիի Ստամպոլոյ Պատմութիւնը աւարտած տարին՝ այսինքն 1684ին, Գատըզիւզի մէջ չկար զեռ Հայութիւն կամ Հայ Եկեղեցի եւ այս պատճառաւ՝ կ'ենթադրեմ թէ ժ.Ը. դարու սկիզբներն էր՝ որ Հայ գաղութ մը հոն գոյութիւն ունեցած է. եւ իմ այս ենթադրութիւնս կը հետեւեցնեմ նախ՝ Գիւղին Հին Ազգային Գերեզմանատու-

¹⁵¹ Պատմութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ. Մ. Վրդպէի Մտարտեանց, Երուսաղէմ 1872, էջ 61:

նին զուանը վերեւը փորագրուած թուականէն, որ է «1740». յետոյ Սարգիս Դպիրի այն տողերէն, որով կ'իմացնէ թէ՝ «Եկեղեցին հնացեալ յոյժ էր եւ խարխուլ», ուստի՝ առանց վերապահութեան կրնանք ընդունիլ, որ զո՛նէ 1700ին եթէ ոչ առաջ կային հոն Հայեր, որոնք չինած էին հարկաւ իրենց համար փոքրիկ աղօթատեղի մը, անշո՛ւշտ փայտաչէն, որ Սարգիս Դպիրին աշխատասիրութեան ատենը՝ այսինքն 1800ին արդէն փլէջու մօտ վիճակի էր հասած:

Այս խարխուլ Եկեղեցին հիմէն կը շինուի՝ շնորհիւ Նորատունկեան Տեար Գաբրիէլի պապին՝ Յարութիւն ամիրայի Նորատունկեան, ինչպէս կ'իմանանք անոր շա՛տ գեղեցիկ կերպով գրուած Տապանագրէն որ կը գտնուի Գատըզիւզի Հին Գերեզմանատունը, եւ է հետեւեալը.

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱՅ ՆԻՁԱՄ ՈՒՍԱՍԻ

ԸՆԴ ԱՍՊԱՐԷՉ ԸՆՁԵՂ ԿԵՆԱՅ ՁԻԳ Ի ՃԵՄ ՄԵՐԹ Ի ԺՊԻՏ՝ ԲԱՂԳ, ՄԵՐԹ Ի ՆԵՆԳ ԲԱԶՄԱԿԵՄ ՊԱԿԱԶԱՄԲԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՎ ԸՐՆԹԱՅՍ ԻՄ ԼԻԱԲԱՂԳԻԿ Ի ՀՈՂ ՇԻՐՄԻՍ ԱՄՓՈՓԻՄ: ՀԱՅՐ ԲԱԶՄԱՇՈՒՆԿ ԵՒ ԵԻՏ ԹՈՒԱՆՅ ՆԱԽԱԶԱԻ ԸՆԴԵԱԼ Ի ՍԻՐՏ ԱՍՏՈՒԱՇԱՅՆՈՅ ՃԱՇԱԿԱԻ. ԱՍՏ ՔԱՂԿԵՏՈՆ ՎԵՐԱՆՈՐՈԳ Ի ՀԻՄԱՆՅ ՏԱՃԱՐ ՅԻՄ ՁԵՌՆ ԵՏԵՍ ԿԱՆԳՆԵԱԼ ՎԵՀԱՊԱՆՇ ՈՒ ԱՆԳ ՄԵՆԱՍՏԱՆ ՍԵՐԱՍՏԻԱՅ ՀԱՅԱՊԷՍ ՆՊԱՍՏԵԱԼ ՅԻՆԵՆ Ի ՆՈՐ ՇԻՆՅ Ի ՀԱՆԿԵՍ, ԸԶԲԵՉ ՀՈԳԻՍ, ԱՌ ՔԵՉ ԿԱՆԵԱԼ ՕՐԸՆԵ, ՏԵՐ, ՔԵՉ ԻՄ ԱՍՏԵՆ ԿՄԱՆՔ ՄՆԱՆ ԱՆՀԱՄԲԵՐ, ՈՐ ԸՆԴՇՈՒՅՆԵՐ ՁԻՍ ՅԱՂԵՏԻՅ ԱՇԵԱՐԸԻ ԴԳ ՍԳՈՒՇԱԻՈՐ ՇԱԻՂ ՅԱԼԻՍ ԱՄԵՀԻ ՏԵՐ, ՄԻՆՁ Ի ԴԱՏ ՏԻՆԶԵՐԱՅ ՓԱՌՕՔ ԳԱՍ ԸՍՏ ԱՐԺԱՆԻՍ ՏԱԼ ԸՎԱՐՁ ԵՒ ԿԱՄ ԸՊԱՏՈՒՀԱՍ ՄԻ՝ ՁԻՍ ՅԱՋԵԱՅԳ Ի ԳՈՒՄԱՐԷՆ ՄԵՐԺԵՐ՝ ՏԵՐ, ԸՆԴ ՔԱԿԵԼՈՅԳ ԸՆԿԱԼ ԵՒ ՁԻՍ ՄԵՐԳԱՍԵՐ ՄԵՌԵԱԼ ԵՌԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԵՔ ԱՄԱՅ 1843 ՅՈՒՆՈՒԱՐ 5

1814 Յուլիս 4ին է՝¹⁵² որ տեղի կ'ունենայ Գատըզիւզի Եկեղեցւոյն այս շինութիւնը «ի հիմանց», սակայն պահելով Սուրբ Աստուածածին անունը, զոր կը փոխեն ապա եւ կ'ընեն «Սուրբ Թագաւոր» որով ճանչցուած է ցարդ:

Բայց կ'երեւի թէ այս երկրորդ շինութիւնն ալ երթալով կը հիննայ, որովհետեւ 1858ին քարուկիր ու գեղեցիկ կը վերաշինուի այն, ինչպէս կը յայտնէ Եկեղեցւոյն ճակատը գրոշմուած Արձանագրութիւնը՝ որ է.

¹⁵² Պատմութիւն Աւետիս Պէրպէրեանի, էջ 78 եւ 451:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ՀԻՄԱՆԵ ԿԱՌՈՒՅԱԻ ՍՈՒՐԲ ԹԱԳԱՒՈՐԻ ՏԱՃԱՐՍ ԱՐԳԵԱՄԲԻ ՄԵՇԱՊԱՏԻ ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՅԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԿԱՐՆԵՑԻՈՅ Ի ՅԱԿԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ ԱԶՆՈՒԱԿԱՆ ԻԻՐՈՅ ԱԶԳԱՏՈՀՄԻՆ: Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՏԵԱՌՆ ՅԱԿՈՒԱՅ ՍՐԲԱԶՆ ԱՐԿԵՊԻՍԿՈՍԻ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1858 ՍԵՊՏ. 30

Սուրբ Թագաւոր Եկեղեցւոյ այս վերաշինութիւնը կատարող Կարապետ Մուրասեան մեռած է 1862ին եւ թաղուած Եկեղեցւոյ բակին ձախ կողմը, ունենալով փառաւոր Մահարձան մը, որուն վրայ կը կարգացուի՝

ԱՍՏ ՀԱՆԳՁԻ ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՅՃԱՆԵԱԼ 1862

պարզունակ տողերը. իսկ սորա հանդիպակաց կողմը, այսինքն Եկեղեցւոյն հարաւակողմը թաղուած է Հիմնադրին կինը, որ ունի իր շիրիմը հետեւեալ Արձանագրութեամբ.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻ ՄԱՀՏԵՍԻ ԵԱԹՈՒՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՅՃԱՆԵԱԼ 1870

Փոքրիկ՝ բայց սիրուն է «Ս. Թագաւոր» իւր հրաշակերտ ճարտարապետութեամբը, եւ համբաւուած է իբրեւ հրաշագործ, ուր ամէն շաբաթ օր ուխտի կ'երթան Կ. Պոլսոյ այլեւայլ թաղերէն:

Ունեցած է ընտիր քարոզիչներ՝ ինչպէս Գարեգին վարդապետ Սրուանձտեանց (յետոյ Եպիսկոպոս), Եղիշէ վարդապետ Այվազեան (Տրապիզոնի Առաջնորդ), Մեղիսեղէի Արքեպիսկոպոս Մուրատեան (կաթողիկոս ընտրուած, եւ երկու անգամ Առաջնորդ եղած ընտրուած, եւ հոն վախճանած), Եղիշէ Արձմիւռնիոյ եւ հոն վախճանած), Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան (Պատրիարք Երուսաղէմի), Գնել Եպ. Գալիմքեարեան եւ ուրիշներ, որոնց ցանկը երկար է գրել. բայց չմոռնանք յիշել՝ թէ հին ատեններն ալ աքսորավայր եղած է զաւրնիկց մէկ երկու պատվարի քանդակը: Գրիգոր Խամսեցիին՝ երբ 1802 շոկոտեմբեր 11ին¹⁵³ վար կ'առնուէր, իսկոյն կ'աքսորուէր Գատըզիւզ, հոնկէ ալ էջմիածին՝ ուր կը վախճանի 1812ին¹⁵⁴: Գատը-

¹⁵³ Պատմ. Աւետիս Պէրպէրեան, էջ 49:
¹⁵⁴ Գիւղն Հայոց Պատմութեան, Գիւտ Քահանայ Աղանեանի, Գիւրք ժ., էջ 465:

զիւզ աքսորուած է նաեւ 1815ին՝ Արբաշաճ Պատրիարք Գոլեան¹⁵⁵, երբ նոր աւարտած էր Եկեղեցւոյ երկրորդ շինութիւնը:

Չգիտենք թէ նախնի ատենները Ս. Աստուածածին կամ Ս. Թագաւոր քանի՞ քահանայ կը պահէր, բայց կը յիշեմ մեր տղայութեանը, թէ մէկ հատ միայն կը պաշտօնավարէր՝ Տէր Յարութիւն անուն փառահեղ Եկեղեցական մը՝ որ ամենայն ինչ էր հոն: Ասոր վախճանելէն յետոյ պաշտօնավարած են ուրիշներ, որոնցմէ նշանակելի են՝ Տէր Յովհաննէս Աւագ Քահանայ Հիւնքեարպէյէնեան՝ քահանաւոր լեզուագէտը, երբեմնի Հովիւր Բարիզի Հայոց. եւ Տէր Վրասապուհ Քիլարեան՝ իբրեւ Ղարիպ տէրտէր, բայց ապա՝ Եպիսկոպոս եւ Բարիզի ու Պէլճիքայի Հայ գաղութին Հոգեւոր հովիւ, որ համբաւուոր Աղեքսանդր Մանթաշեանի մօտ պատճառ եղած է Բարիզի Ս. Յովհաննէս գեղեցիկ Եկեղեցւոյն հիմնադրութեանը:

Ս. Թագաւորի վերջին շինութեանը հետ՝ անոր փակին ալ կողմն ալ կը կառուցուի երկսեռ Նախակրթարան-Դպրոց մը «Համալսարան-Մուրատեան» անուն, որ շատ չանցած անբաւական կը համարուի. վասն զի Գատըզիւզի Հայ բնակչութեան թիւը բազմանալով կը բազմանար, Հայ երկսեռ մանուկներու թիւը զգալապէս կ'աճէր, ուստի 1873ին թաղային իշխանութիւնը ժողովուրդին հետ համախորհուրդ հարկ կը տեսնէ, Եկեղեցիէն հեռու մեծակ հող մը գնել ու կանգնել երկսեռ նոր վարժարան մը ընդարկածակ, որ կը կոչուի՝ «Արամեան»: Սակայն տարիներ վերջը Մաթոս եւ Արիկ Ունճեան յայտնի բարերար հարազատները, այս Դպրոցին ետեւը կը հիմնեն ուրիշ չէնք մ'ալ՝ իբրեւ Մանկապարտէզ, որով Դպրոցին անունը այն ատենէն ի վեր կը փոխուի «Արամեան-Ունճեան»ի:

* * *

Փայլուն ժամանակներ ունեցած է այս վարժարանը, շնորհիւ կարող եւ ազգասէր անձերէ բաղկացած թաղական խորհուրդի մը՝ որուն երկար ժամանակ ատենապետած է՝ կնոջս Հայրը, Կարապետ Գալիմաճեան, ծնած Կելիպոլու:

Այս Դպրոցին մէջ դասախօսած են՝ Պուէտ Խաչատուր Միսաքեան, բանաստեղծ Յովհաննէս Սեթեան, Միհրան Ասքանազ,

¹⁵⁵ Պէրպէրեան, անը, էջ 80:

որոնց հետ սնորէն ու միանգամայն դասատու եղած են՝ չարիւղէտ Գրիգոր Զաքարեան, Տոքթ. Ն. Տաղաւարեան, Մինաս Ծարեան, մանաւանդ մեծանունն Ռէթէոս Պէրպէրեան, որ 1876ին վարժարանին Հողարարձութեան Ատենապետ՝ Տեար Գաբրիէլ Նորատունկեանի հետ անհամաձայնութիւններ մ'ունենալուն ազգաւ, կը հրաժարի ու կ'երթայ անմիջապէս զիւրի մէջ կը բանայ՝ մանչերու յատուկ իր անուանակիր առանձին վարժարանը, զոր 1879ին վերջնապէս փոխադրեց Իւսկիւտար-Սեւրմիէ՝ Ս. Խաչի ետեւը, ինչպէս պատմած եմ արդէն:

Գառըզիւզ կամ Քաղկեդոն՝ համակ ծովապատ տափ-տափարակ տեղ մ'է, բայց Կ. Պոլսոյ ամենահարուստ հայ թաղն էր եւ ընչէր ու ծանօթ ընտանիքներու բնակավայրը. հոն՝ երեւելի յոյն հասարակութեան հետ կողք կողքի կ'ապրէին՝ Կիւլպէնկեան, Մանուկեան, Ֆրնտրըլեան, Ունճեան, Կ. Գափա-մաճեան, Հարենց Աղասեան, Գոնչէկիւլ եւ ուրիշներ, որոնք ունէին իրենց շքեղ ապարանները ու առատ նուէրներով կ'օժանդակէին, թէ՛ եկեղեցւոյն ու դպրոցին, եւ թէ՛ ազգային ամենակերպ բարեգործական Հաստատութիւններու:

Մանաւոր վարժարաններ ալ պակաս չեն եղած հոն, ինչպէս՝ Էտիլեան Մանկապարտէզը, Սպանդարեան վարժարանը եւ Թորոսեան Դպրոցը, որոնք կարճատեւ կեանք ունեցած են, թէեւ արգիւնաւոր:

* * *

1869ին Վենետիկի Միթրարեան Միաբանութիւնը հաստատած է հոն, Մօսայի ծոցին վրայ իշխող, ու Ֆէնէր-Պահչէսին, Մարմարայի ծովը եւ իշխանաց կղզիները զիտող՝ ամենազեղեցիկ վարժարան մը՝ բարձրագոյն եւ գիշերօթիկ, որուն առաջին տեսուչն եղած է Հ. Վարդան Վ. Շիշմանեան՝ ինչպէս գրած է ինձ ժամանակին Վենետիկէն Գեր. Հ. Յովհ. Թորոսեան, Ս. Ղազարի Աթոռակալ բազմամուտ վարդապետը, եւ տարիներու ընթացքին ալ՝ սոյն վարժարանը վարած են հետզհետէ՝ Հ. Աբրահամ Վ. Զարեան, Հ. Արիտակէս Վ. Գասպարի, Հ. Մեսրոպ Վ. Սահակեան, Հ. Աթանաս եւ Հ. Յակոբ Տիրոյեան եւ Հ. Յովհաննէս Վ. Թորոսեան եւ ուրիշներ, ընծայելով Ազգին ուսեալ ու կիրթ բազմաթիւ գաւազներ: Սակայն՝ աւա՛ղ, որ այս վարժարանին փառաւոր չէնքը, զոր

Միաբանութիւնը աւելի ընդարձակելու միտք ունէր, այրեցաւ 1915ին ու կը մնայ ցարդ այրացաւեր:

Բացի Միթրարեաններէն, Ֆրանսայի մայրապետներու Միաբանութիւնն ալ Մօսայի մէջ հաստատած էր աղջիկներու յատուկ ընտիր վարժարան մը, ուր բաւական թուով հայ աղջիկներ կը դաստիարակուէին երբեմն:

Գիւղը ունէր եւ ունի՝ կոկիկ թատրոն մը, ուր երբեմն երբեմն հայերէն լեզուով ներկայացումներ տեղի կ'ունենային, եւ որու բեմին վրայ բազմեցաւ ծափեր խլած են՝ մեծարուեստ Աղամեան, Մնակեան, Փասուլեան, Սիրանոյշ եւ այլ յայտնի դերասաններ ու դերասանուհիներ:

* * *

Գառըզիւզի մէջ Հայ-Կաթոլիկ ազգայիններն ալ ունին իրենց յատուկ եկեղեցին՝ հաստատուած 1890ին նախ՝ իբրեւ մատուռ, որ փայտաշէն ըլլալուն՝ վար կ'առնուի 1909ին եւ տեղը կը կառուցուի արդի քարուկիր սրբուհակ եկեղեցին, կոչուելով «Ս. Լեւոն» ի պատիւ Լեւոն ԺԳ. Պապին, որովհետեւ սա բարի եղած էր ծախքերուն կարեւոր մէկ մասը անձամբ հողալու:

Այս եկեղեցին կը գտնուի Բէֆմէգ-Թաւալախի կոչուած թաղամասին մէջ. քովը ունի Երեցատուն եւ Դպրոցիկ մը, բայց 1900ին Անարատ Յղութեան անձնուէր Բոյրերը կը հիմնեն Ս. Լեւոնէն բաւական հեռու տեղ մը, յատուկ վարժարան, որ կը շարունակէ ցարդ կրթել Հայ աղջիկներ:

Եւ այսպէս ահա, Գառըզիւզ եղած է տակաւ առ տակաւ, հայաբնակ բաւական կարեւոր քաղաքիկ մը՝ կրթատէր եւ ուսումնասէր, որ կը տարածուէր մինչեւ Ֆէնէր-Պահչէ եւ Հայտար-բաշայի մօտ՝ Եէլ-տէյեր-մէնի (հողմաղացք) կոչուած բլրակը, ուր նաեւ գոյութիւն ունեցած է հոն հայ բնակչութիւն իր մանկապարտէզներով եւ դպրոցով:

Գառըզիւզի այս շքեղ ու վառ կենդանութիւնը մարած է այժմ զժբախտաբար. հայ բնակչութիւնը մեծապէս նուազած ու նուազած է հոն, բայց Արամեան-Ունճեան Դպրոցը կանգուն է եւ եկեղեցին կը պահէ զեւ, թէեւ անփառունակ կերպով, իր վաղմի ուխտաւեղիութեան համբաւը:

Հաստատուած են հոն գանազան բա-

բենպատակ ընկերութիւններ վաղամեռիկ, որոնցմէ կ'ապրի միայն «Ալֆաուախսուալը» դարմանելով Հայ եւ ամենազգի ազգատ ու կարօտ հիւանդներ:

* * *

Գառըզիւզ կամ Քաղկեդոն՝ բիւզանդական պատմութեան մէջ ալ ունի կարեւոր էջեր, զորս հակառակ քանի մը պատմագիրներու տարակարծութեան, կրնանք «Ալգայիկ» համարիլ. էջեր՝ տխուր ու սեւ, աւա՛ղ, եւ արգիւնք՝ վայրագ թշնամութեան:

Մօրիկ Հայկազնը, որ աննշան պարտիզպանի մը գաւազ, ծնած կ'ըսուի Օշականի մէջ՝ 539 թուին¹⁵⁶: Իր զինուորական քաջագործութիւններովը մեծ հռչակ կը հանէ, 575ին Տիրեր կայսրը զինքը Արեւելեան բանակին ընդհանուր Սպարապետ կը կարգէ¹⁵⁷. Մօրիկ Հայկազն քշնամիներու մեծագուն գունդերու կը յաղթէ, Հռոմէական փառքը կը պանծացունէ, Պարսից ամբարտաւանութիւնը կը խորտակէ, ինչպէս գրած է Հ. Տէր Սահակեան (էջ 43): 582 Օգոստ. 5ին, Տիրէրի աղջկան՝ Կոստանդիայի հետ կը նշանուի¹⁵⁸, եւ նոյն տարին Տիրէրի կամքով Բիւզանդիոյ կայսր կը հռչակուի¹⁵⁹, ու Տիրէրի մահէն (589 Օգոստոս 14) յետոյ Ս. Սոփիայի եկեղեցւոյն մէջ կը պսակուի նշանափայլի եկեղեցւոյն մէջ կը պսակուի նշանափայլի հետ: Մօրիկ կայսր իւր շինարար գործունէութեամբը ու բարեբարութիւններովը 20 տարի թագաւորելէ ետքը՝ դաւադրութեան մը խոյս տալով ապաստանարան կը փնտռէ Յիբիոն կոչուած (արդի Քալամըշը) ծովախորշին Սուրբ Աւքոնոմ եկեղեցին, ուրկէ քիչ հեռու՝ ինքը 596ին՝ իւր ծախքովը ուրկէ քիչ հեռու¹⁶⁰, որու մասին կանգնած էր ծերանոց մը¹⁶⁰, որու մասին Գոկոտ. Զամպաքո բաշա մեծանուն բժիշկը Գոկոտ. Զամպաքո բաշա մեծանուն «Les Leproseries de Constantinople» վերնագրով հրատարակած աշխատութեանը մէջ¹⁶¹:

Դաւաղիւնները սակայն, Մօրիկի ետեւէն կը հասնին. զինքը, կնոջն ու գաւազներուն հետ եկեղեցիէն բռնաբար դուրս կը հանեն

¹⁵⁶ Հ. Կարապետ Տէր Սահակեան, Հայ Կայսերք Բիւզանդիոնի, Վենետիկ 1905, Հատոր Ա., էջ 26:
¹⁵⁷ Անդ, էջ 27 եւ Հ. Մատթէոս Մաղաբ-թէպիլեան, Կենսագրութիւն Երեւելի Արամեայ, Վենետիկ 1839, Հատոր Ա., էջ 872:
¹⁵⁸ Հայ Կայսերք Բիւզանդիոն, Ա., էջ 41:
¹⁵⁹ Անդ, էջ 43:
¹⁶⁰ Անդ, էջ 43 եւ Հ. Գ. Ինճիճեան, Ամարանոց Բիւզանդիոն, էջ 52—53:
¹⁶¹ Revue Médico-pharmaceutique de Constantinople, 1909 Յունիս, էջ 125:

եւ նաւակի մէջ զննելով կը բերեն Եւտրոպեայ ծոցին՝ այսինքն Ֆէնէր-Պահչէէն մինչեւ Մօսայա տարածուած ծովածոցին նաւահանգիստը եւ հոն՝ հրամանաւ Փոկասի՝ որ նենդութեամբ կայսերական դահլը բարձրացած էր, նախ՝ Մօրիկի աչքին առջեւ իր չորս գաւազները կը մորթեն, կինը կ'աքորեն եւ յետոյ ալ զինքը կը զլխատեն, մարմինները Մարմարայի ծովը կը նետեն, իսկ կայսեր եւ որմարայի ծովը կը նետեն, իսկ կայսեր եւ որմարայի ծովը կը տանին Պոլիս եւ ցիւղներու գլուխները կը տանին Պոլիս եւ ցիւղներու վրայ՝ ի տես կը զննեն Հեպտոմոն դաշտին մէջ¹⁶²: 602 թուին էր որ կը կատարուէր այս եղեւոնը:

* * *

Օտար Պատմագիրներ տարիներ յետոյ Մօրիկ Հայկազնի գովքը կը հիւսեն եւ անոր չարաչար սպանութեան ճիշտ երեք դար յետոյ՝ կայսր Ռոմանոս Լեկաբէն երկիւղած յարգանք կ'ընծայէ անոր յիշատակին եւ յուրապատմութեան մեծաշուք հանդէսներ կատարել կու տայ¹⁶³, բայց ի՛նչ օգուտ...:

* * *

Գառըզիւզի մէջ իբրեւ արտորական աղբար է՝ նաեւ Բիւզանդահայ կայսրներուն նշանաւորագոյնը՝ Յովհաննէս Զմշկիկ որ դահլը բարձրացած է 969 Դեկտեմբեր 10ին¹⁶⁴, եւ որ՝ «ձիթեմեաց անտառ» (bois des oliviers) կոչուած տեղը (այսինքն՝ արդի Քալամըշին ետեւները) հաստատած էր 975ին «Ուրկանց-Հիւանդանոց» մը, որու մասին՝ Զմշկիկի ժամանակակից՝ Լեւոն յոյն սարկաւազը գրած է զրուստալից էջեր, զորս իրեն առաջնորդ առնելով՝ Դոկոտ. Զամպաքո բաշա եւս 1909ին հրատարակած է հմտալից յօդուած մը այդ Ուրկանոցին վրայ¹⁶⁵, իսկ անկէ առաջ՝ 1899ին Ն. Քարամեան «Լոււմայ» հանդէսին մէջ լոյս կ'ընծայէր Զմշկիկ կայսեր մասին իրատ գեղեցիկ աշխատութիւն մը զոր կ'արժէ կարդալ¹⁶⁶.

«Յովհաննէս Զմշկիկ Բիւզանդիոյ կայսեր հարստութիւնը շատ մեծաքանակ էր. Պատրիարքի ցանկութեան համաձայն Յովհան

¹⁶² Հայ Կայսերք Բիւզանդիոնի, Հատոր Ա., էջ 122—123 եւ Հ. Գուկաս Ինճիճեան, Ամարանոց Բիւզանդիոն, էջ 160:
¹⁶³ Հայ Կայսերք Բիւզանդիոնի, Ա., էջ 124:
¹⁶⁴ Հայ Կայսերք Բիւզանդիոնի, Բ., էջ 153, 174:
¹⁶⁵ Revue Médico-pharmaceutique de Constantinople, տարի 1909, էջ 125:
¹⁶⁶ Լոււմայ, 1899, Յունիս, էջ 53—101 եւ 1900 Յունիս, էջ 90—147:

իւր այս մեծ կարողութեան կէսը բաշխեց մայրաքաղաքի շրջաքաղաքի գեղացիներին, իսկ միւս կէսը նուիրեց այն մեծ Հիւանդանոցին, որ կար Կ. Պոլսում բորոտները եւ ամէն տեսակ վարակիչ հիւանդութիւնները համար:

«Կ. Պոլսի այս Հիւանդանոցը շինուած էր Ասիոյ ափում, այժմեակ Իւսկիւտարում¹⁶⁷: Չմէլիկի մեծաքանակ օժանդակութիւնները չնորհիւ ընդարձակուեցաւ նրա շէնքը: Նոր կայսրը մինչեւ իւր կեանքը վերջին օրերը մեծ խնամք էր տանում դրա վրայ: Ո՛չ միայն առատաձեռնութեամբ հարստացնում էր, այլ նաեւ յաճախ այցելութեան էր գնում, հիւանդներին սիրտ էր տալիս. վշտակցում էր այդ թշուառներին, չընայելով իւր նրբաձաշակութեան, փառահիւսութեան, պատում էր իր իսկ ձեռքով դարչելի վէրքերն ու զոռելի ուռոյցներն, «ուշք չընդարձնելով ամենեւին, իւր ծիրանու եւ իւր վեհափառութեան վրայ»: Ո՛վ չէ յիշում արդեօք Չմէլիկի կայսեր դաշնակից ու բարեկամ Աշոտ ողորմած Հայոց թագաւորին, որ առանց թշուառ հիւանդների ու բորոտների սեղան չէր նստում: Ո՛վ է արդեօք օրինակ առնողը. կա՞յսրը թէ նրա ազգակից Հայ թագաւորը, թէ այս յատուկ էր ժամանակի Հայութեան ոգուն...»:

Բայց թողունք այս հին ու հնագոյն պատմութիւնները ու փակենք դանոնք, չմոռնալով՝ թէ Գատրգիւղ ունեցած է Ազգային Գերեզմանատուն, որ այժմ ճիշդ քաղաքին կեդրոնը կը գրաւէ շրջապատով մը գոցուած, դռանը վերեւը ունենալով՝ «Գերեզմանատուն Հայոց, 1740» պարզ արձանագրութիւնը:

Ասոր դիմացն է Յոյներուն ալ, բայց քառասուն տարիէ ի վեր հոն մեռել թաղելը արգիլեց կառավարութիւնը, որովհետեւ գիւղը հետզհետէ ընդարձակուելով քաղաքի ձեւ առաւ եւ բազմաթիւ տուններ սկսան շինուիլ անոնց բոլորափրկը:

Գիւղէն շատ հեռու Գուռապաղը-Տէրէ (գորտաձոր) կոչուած վայրը յատուկ տեղեր որոշուեցան եւ Հայ, Յոյն ու Լատին ժողովուրդին համար նոր գերեզմանատուներ կազմուեցան քով քովի:

Նախկին գերեզմանատուներն մէջ կը հանդէի իմ մեծ մայրս (հօրամայր)՝ Տիկիին Հնազանդ, եւ կնոջս մեծ Հայրը (մօրահայր)

Յարութիւն Փափազեան կամ Տէր Բառնաւառեան, որ Իւսկիւտար-Սելամէի իր տունին մէջ Հայ թատերական ներկայացումներու նախաձեռնակ եղած է, ինչպէս գրուած է արդէն:

Նոր գերեզմանատունը թաղուած է՝ Տէր Յովհաննէս Աւագ Բահանայ Հիւանդարդէյեանեան (Հեյլէնագէտ ու Երբայերէնի հմուտ). ինչպէս նաեւ Ս. Սաչի դպրոցական հին ընկերներէս ու Բարիդեան բժշկութեան դասուկիցներէս՝ Դոկտ. Նիկողոս Էսմերեան՝ քաջարուեստ ակնաբոյժը, եւ Հայտար-բաշայի թրքական Հիւանդանոցին վերաբուժապետ զնդապետ Դոկտ. Մկրտիչ Սանճաքճեան վաղմի բարեկամս, եւ ծանօթ գրագէտ ու թութերագիր Սրապիոն Թղլեանը, պատանեկութեանս ատենի դասատուներէս:

Երեմիա Չէլէպի այսպէս իւր ուղեգրութեան 186—189 տողերուն մէջ Գատրգիւղի վրայ արագ ակնարկ մը նետելով հանդերձ, անոր շուրջը զտնուած պարտէզ ու այգիներն ալ զանց չ'առնելու նշանակել, մանաւանդ՝ Ֆէնէր-Պահչէսի (լապտերապարտէզ) կոչուած սիրուն հողալեզուակը¹⁶⁸, որու ծայրը՝ կ'ըսէ, կը վառի փարոս-լապտէր մը, որ ցորեկը մինչեւ կէսօրուայ ճամբայ հեռուանց կ'երեւի ծովէն եւ գիշերներն ալ արուսեակ աստղին պէս կը լուսաւորէ, որ պէս զի դէպի Վոսթոր կամ Նիկոմիդիոյ ծոցը դացող նաւերը զգուշաւոր կերպով ճամբորդեն եւ այն տեղուանքը գտնուած ժայռերուն շարունակին մութին մէջ: Կը յայտնանէ՝ թէ «Ֆէնէր-Պահչէ»-ն դրօսաւայր մ'է, դէմը կ'իւնայ Արեւմուտքը եւ ձախ կողմէն ալ կը տեսնուին խումբ մը մանր կղզիներ:

Այս կղզիներուն անունները կու տայ յետոյ՝ 227րդ տողին մէջ, իսկ հոս՝ 199—220 տողերով կ'արձանագրէ պատմական կարեւոր երկու կէտ, որոնց կ'արժէ անդրադառնալ

¹⁶⁸ Այս հողալեզուակի մասին Սարգիս Գպիւր Սարգի-Յովհաննէսեան ալ իր Պոլսական «Պոլսոյ» ընթացքին գրեթէ Երեմիա Չէլէպիի հետեւելով կը գրէ սուպէս՝ «Եւ յետ սորա (իմա՛ Գատրգիւղ) է Մօտա Պուռնին, որ է բազուկ մի ի դուրս ելեալ: Եւ այս ծոցն Գալաթիոյն եւ հեղեղատ նոսրին: Եւ յետ սորա է՝ Ֆէնէր-Պահչէսին, որոյ ի հանդիպոյ շինեալ է աշտարակ մի, որ կայ կայացեալ որպէս արձան ի վրայ հաստահիմն քարանց եղիցոյ ի մէջ ծովուն, եւ ի գլուխ նոսրին լուցեալ վառի Ֆէնէր (Լապտէր) ի գիշերի՝ վառն ևսացն ի քարանց գգուշաքեան, ի մտայլ մքալքեան:

Եւ Ֆէնէր-Պահչէսին ծայր մի որպէս քիթ ի դուրս ի ծով ելեալ՝ եւ վայելչապէս ծառովք սօսեաց եւ նոնեաց զարդարեալ՝ տեղի է գրօսանաց...» եւ այլն:

համառօտ տեսութիւն մը դժելով. կարդանք ուրեմն նախ Երեմիայի գրածը (տող 199—218).

- 199 Ընդ ձախմէ առաջի կանգնեալ՝ Մանուկ եւ կըզգինքն համայն, Ի քամակն ունի յեզերք՝ Զնաւապարհն Նիկոմիդեան, Որ հարիւր չափ մզումաւ՝ Հինգ վեց ժամն գան եւ կամ երթան, Եւ ցամաքաւ յետ կողմէ՝ Երկու օրն կամ երեք ցամաքան: Կըզգին Ներսէսի սրբոյն՝ Իբրու աստ գոյ ի յաքարման, Զուր մի բարեհամ դեռ կայ՝ Անպակաս որ հանդիպին այն:
- 205 Ի մէջ եւ ի գլուխ կըզգույս՝ Տեղի է եւ ժամու խորան: Աւերեալ որպէս բազումքն՝ Խորանին աստ մին¹⁶⁹ նըշմարան: Ընդ Փիլիպպոսի սրբոյն՝ Յորժամ էլ գնալ ի Պուրսայն: Սա նաւապարհի վերա՝ Զերկու օր կացաք ի խնդման: Երեւելիք յամանակն՝ Եւ աուրք գոյ խաղաղութեան:
- 210 Մեզ լաւ երեւիւր յայնժամ՝ Թէ իբրաւ ելանել արժան: Ուր ձուկըն գըլըն պալըլի՝ (թրածուկ) ձագուկ էր ի կըզգիս գըտան: Երկու կագ չափու երկայն՝ Յեզր ծովու արքն մեր կալան: Շատ խնդաց Կաթողիկոսն՝ Որ եղեւ համայնիցս բաւական: Ընդ բարեաց մեր այս աւելորդ՝ Լայն եւ արձակ եղաք ի գրօսան: Վեմ եղ պատարագ մատոյց՝ Ի շնորհացն առ մեզ ըսփոնցան. Որպէս եւ այլ աշխարհի՝ Միշտ յուսամք գգուքն տեսնական Շաւք ի քաղաքն յետ դարձան՝ Ընդ նմա մեք հետեւական: Ի Պուրսայ բարով մնայ՝ Արար մեզ գոյ անդարձական:

* * * Ուրեմն երբ 199րդ տողովը Երեմիա կ'ըսէ՝ թէ Ֆէնէր-Պահչէի ձախէն մանր կղզիներու տեսարան մը կը պարզուի, յաջորդ 200

¹⁶⁹ Այսինքն՝ թէ միայն խորանին տեղը կը նշմարուի:

եւ 201 տողերովը ալ չմոռնար դէպի արեւելեան կողմերը թռչալիլ, ու յիշել Նիկոմիդիան եւ յարել՝ թէ 100 մզոն է անոր հեռաւորութիւնը եւ հոն ուղեւորելու ճանապարհը կը գտնուի Ֆէնէր-Պահչէի հետեւերը՝ ծովեզերքն ի վեր, ու կը յարէ՝ թէ ծովով հինգ վեց ժամէն հոն կ'երթցուի կամ նոյնքան ալ վերադարձի համար, իսկ ցամաքէն 2 կամ 3 օրէն:

Գիտենք որ Նիկոմիդիա քաղաքը վաղ ժամանակներէ սկսած, հայաբնակ եղած է եւ ունեցած է Արմաշի Չարխափան Ս. Աստուածածին վանքը, ուր Երեմիա Չէլէպի երկու անգամ ուխտի է գնացած. նախ իւր Տէր Հօրը հետ՝ 1661ին եւ յետոյ՝ իւր մօրը մահուան տարին՝ 1663ին, ինչպէս մանրամասն տեղեկութիւն կու տան այս մասին Ծանօթագրութիւններու Ա. եւ Բ. հատորին՝ 156—160 եւ 722—723 էջերը:

Երեմիա՝ Նիկոմիդիոյ մասին երկար չի գրեր ու անմիջապէս անցողակի իմն կը յիշատակէ՝ Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցած ազգային երկու կարեւոր եղելութիւն, զորս՝ մեր հին պատմիչները բազմիցս եւ երկարօրէն նիւթ ըրած են իրենց գրքին:

Կ'արժէ որ քիչ մը կանգ առնենք ատոնց վրայ, ինչպէս ըսի արդէն, եւ դետեղենք հոս գանոնք ամփոփ կերպով:

* * *

Երեմիա՝ երբ իր 199րդ տողովը կ'ըսէ՝ թէ Ֆէնէր-Պահչէսի ձախ կողմէն տեսարանը մանր կղզիներ կը ներկայացնէ, 203րդ տողովը ալ կ'ուզէ յայտնել թէ՛ Սուրբն Ներսէսի աքարատեղին՝ գո՛գցես այդ կղզիներէն մէկ հատը եղած ըլլայ, որով Ս. Ներսէսի կղզի¹⁷⁰ յորջորջումով գայն կ'որակէ եւ յաջորդ տողովը՝ բարեհամ ջուր մը կայ հան՝ կը գրէ, եւ յետոյ՝ կը յաւելու՝ թէ՛ կղզիին գագաթը աւերակ եկեղեցւոյ մը խորանին փլատակները կ'երեւին դեռ, եւ թէ՛ Փիլիպպոս կաթողիկոսը Կ. Պոլսէն (Բիւքանական) Պուրսա քաղաքը գացած միջոցին, նաւապարհին վրայ դուրս կ'ելլէ այդ կղզին, հան «վեմփար» կը դնէ ու պատարագ կը մատուցանէ, երկու օր կը մնայ, գոհ ժամանակ կ'անցընէ, որով-

¹⁷⁰ Զոր կը յիշատակէ նաեւ Հ. Ղուկաս Ինճիճեան (կղզին Ներսէսի, տե՛ս Աշխ. Զարից մասանց աշխարհի), Հատոր Զ., էջ 507:

Միվրի կամ Ինսիգ առաւի (այսինքն՝ ցից անմարդաբնակ) կը կոչուի եւ որ համակ ժայռ մ'է ահադին եւ սրագաղաթ, որուն վրայ կարելի չէ եկեղեցի շինել: Ահա այս կղզիէն բաւական հեռու՝ բայց անոր դրացին է Նասը առաւի ըստածը որ տափաստարակ կղզի մ'է եւ վրան ունի աւերակ մը, ինչպէս յայտնեցի վերեւ:

Ներսէսի աքսորակղզին այս կրնայ եղած ըլլալ, մանուկն որ՝ Պատմութիւնը կ'ըսէ, թէ նա աւելի հեռուները պիտի աքսորուէր, բայց փոթորիկ մը արդեւը եղաւ եւ սանոյ նաւը հող հանեց զինքը:

* * *

Սպասելով որ աւելի լուսատու աղբիւրներ կարենանք ունենալ մէկ օր այս մասին, դիտենք Երեմիայի միւս տողերը (207—209), որոնք կը խօսին Փիլիպպոս կաթողիկոսի վրայ:

Փիլիպպոս կաթողիկոս, որու մասին Ծանօթագրութիւններու Ա. հատորին մէջ դիտեղած եմ արդէն քանի մը տեղեկութիւններ, Ազգակեցի էր, եւ էջմիածնի կաթողիկոս ընտրուած է 1631ին, յաջորդելով Մովսէս կաթողիկոսին, որուն սիրելի էր եւ անկէ ալ ձեռնադրուած էր¹⁷⁸ Յակոբոս:

Մեր Եկեղեցական Պատմութեան մէջ լատիններն եւ մեծ յիշատակ թողած կաթողիկոսներէն է: Սա 1637ին կ'երթայ Աստղան եւ կը յաջորդի Ս. Լուսաւորչի աջը էջմիածին բերելու¹⁷⁹: 1640ին Դպրոց կը բանայ էջմիածնի մէջ եւ 1651 թուին Առաքել Դաւրիժեցիի գրել կու տայ Հանրածանօթ պատմութիւնը¹⁸⁰:

1651 Յուլիան կաթողիկոսը ճամբայ կ'ելլէ դէպի Կ. Պոլիս, բայց նախ կ'երթայ Կարին եւ անտի Երուսաղէմ¹⁸¹, ուր Սոյ Ներսէս կաթողիկոսին հետ եկեղեցական կարգ մը իրաւասութիւններու մասին համաձայնութիւն կը գոյացնէ:

1652ին Երուսաղէմէն կ'երթայ Կ. Պոլիս ցամաքի ճամբով¹⁸² կը ժամանէ հոն Յունիս 20ին եւ գրեթէ ամբողջ տարի մը կը մնայ, Պատրիարք կը կարգէ Յովհաննէս Մուղ-

նեցին եւ կը վճարէ պատրիարքարանին մեծագումար պարտքերը:

1653 Ապրիլ 26ին կը թողու Կ. Պոլիսը եւ նաւով կ'երթայ Պուրսա քաղաքը, ուղեկից ունենալով իրեն Երեմիա Չէլչպլին եւ ուրիշ աղագայիններ, որոնք կէս ճամբան կ'այցելէն «կղզին Ներսէսի», ինչպէս վերեւ պատմուած է, եւ հոն երկու օր մնալով կը ճաշակեն համեղ Թրաճուկը (տող 211):

* * *

Պուրսայի¹⁸³ մէջ մեծ ընդունելութիւն կը գտնայ Փիլիպպոս կաթողիկոս, հիւր կ'ըլլայ մեծահարուստ Անտոն Չէլչպլի հայուն¹⁸⁴,

¹⁷⁸ Պուրսա քաղաքը Բիւթանիոյ, վաղ ժամանակներէ սկսած ունէր Հայ դաղութ մը բաւական նշանակութիւն: Ֆաթիհ երբ Կ. Պոլիսը առաւ Պուրսայէն Յովսէփ Նախկոստը բերել տուաւ եւ զանիկա Պատրիարք հռչակեց:

¹⁷⁹ Պուրսա նշանաւոր եկեղեցականներ ունեցած է. Գէորգ Գ. կաթողիկոսը հոն առաջնորդ եղած է, եւ հետզհետէ եղած են հոն ուրիշ առաջնորդներ որոնց մանրամասն ցանկը հրատարակուած է տարիներ առաջ Պուրսական թերթերու մէջ:

¹⁸⁰ Պուրսայի մէջ 1888ին առաջին անգամ ըլլալով հաստատուած է շերամարուծական վարժարան, որուն Տնօրէն եղած է Եղրայր Գէորգ Թորոմեան եւ շերամի հունտերու սրանչելի տեսակները հասցուցած է:

¹⁸¹ Այս Անտոն Չէլչպլի մասին Երեմիա Չէլչպլի շատ լաւ չի խօսիր, հակառակ որ վերջերս (տե՛ս «Այլագայ», Բարիս, 19 Յունիս 1934) բարեկամս, բանասէր Տիար Հ. Պէրպէրեան, զայն կը ներկայացունէր իրրեւ մեծատաղանդ եւ բարեգործ անձ մը:

Իրաւ է թէ նա օտարներու քով մեծ յարգ ու պատիւ ունեցած անձ մը եղած է, ինչպէս Հ. Պէրպէրեան ցոյց կու տայ վաւերական աղբիւրներու շնորհիւ, բայց վերջ ի վերջ այս անոր կիսօրնօ փախչելը, կասկած կու տայ թէ ունեցած փարթամ վիճակը յանրապի վատուած բան մ'էր:

Երուսաղէմի վանքը գտնուած Երեմիա Չէլչպլի Օրագրութեան մէջ արձանագրուած են անոր մասին հետեւեալ տղերը զորս յղած է ինձ 1934 Յունիս 20ին Գեր. Մեքոյ Սրբազան Նշանեան:

«Փիլիպպոս կաթողիկոսին Պոլիս գտնուած միջոցին՝ եւ հոնկէ դեռ չի մեկնած, կը գրէ՝ Երեմիա թէ. «Եւ օրս Անտոն Չէլչպլուն հայրս մեռաւ եւ գնացաւ կաթողիկոսիւն եւ վարդապետս ի վերայ նորա, եւ բազում ֆահանայք եկեալ յեկեղեցեացն, եւ զգեստաւորեցան զպիթ գշապիկս եւ սարկաւազունքս եւ սաղաւարտիս եւ ուրարաւ եւ բուրվառով եւ աւետարանաւ... կաթողիկոսն... խաչիս եւ գաւազանաւ, լուցեալ մուկիւնով եւ այսպիսի գարդաւքս եւ ուխտիս միջնիս ի դիրս գերեզմանաց Դաւարոյ այնպէս գնացաւ: (Այս տողէն իմանալու չենք թէ Անտոն Չէլչպլի Հայրը Դաւարիոյ եկեղեցին թողուած է, ո՛չ. այլ Բանկալիի Ազգ. Գերեզմանատունը, որ Դաւարացի բնակչաց, պանդխտից է կ'ըսէ Երեմիա Չէլչպլի (Հատոր Ա., էջ 79, տող 286): Այսօր տեսաք գիտաս վայելչութեան եկեղեցւոյ, զոր լինէր ի ժամանակս քաղաքաց, եւ յետ... քաղմանն եկեալ եկաք ի տուն Չէլչպլուն, հացկերոյք արարեալ հոգոյն, եւ անտի եկեալ գնացաք»:

Սոյն տղերը ապացոյց են թէ ո՛ր աստիճանի ընտել ու թողաւորական կեանք վարող անձ մ'էր Անտոն Չէլչպլին, որ կաթողիկոսին խնդրանքին վրայ՝ ըստ Առաքել Դաւրիժեցիի (էջ 332—333), յանձն կ'առնէ էջմիածնի գանդատունը ամբողջապէս շինել, բայց ըստ Օրագրութեան Երեմիա Չէլչպլի 2000 զըշ. միայն կու տայ այդ նպատակին համար:

¹⁷⁸ Պատմ. Առաքել Դաւրիժեցոյ, Ամսօրերում, էջ 309:
¹⁷⁹ Անդ, էջ 608:
¹⁸⁰ Անդ, էջ 624:
¹⁸¹ Չամչեան Պատմ. Հայոց, Հատոր Գ., էջ 628—629:
¹⁸² Առաքել Դաւրիժեցի, էջ 332:

որու մասին խօսած եմ Ծանօթագրութիւններու Բ. հատորին մէջ (էջ 574 եւ 575):

Կաթողիկոսը Պուրսայէն կը մեկնի, միշտ ցամաքի ճամբով, եւ դէպի 1654ի վերջերը կը հասնի էջմիածին եւ հոն դարձեալ շինարար գործերու հեղինակ ըլլալէ յետոյ, կը վախճանի 1655ին¹⁸⁵ եւ կը թաղուի Ս. Հռիփսիմեանց Եկեղեցւոյն մէջ, ուր կ'ունենայ իւր շիրիմը հետեւեալ Արձանագրութեամբ, զոր կը կարդանք Հ. Ղ. Ալիշանի «Այրարատ» հոյակապ Երկասիրութեան 240 էջին մէջ, սապէս.

«Հագար հարիւր չորս քուին, մարտի քամի եւ հնգին վախճանեցաւ Հաղիակեցի Փիլիպպոս սֆանչելագործ կաթողիկոսն ամենայն Հայոց, եւ եղաւ սուրբ նշարք մորա յայսմ շիրմի, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»:

(Շարունակելի:) ԴԿՏ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ



ԱՅՍԵՐԻԿ ԼԵՂՈՒԻ ԵՆՅԵՏՏ ԳՐՈՇԵԿԿԻՐԸ (ՊԵՆՆԵՆՍԻԿԱՆ ԶՆՔԵՐԻՆ ԾՆՔՆԵՐՈՍԵԱՆ)

Ռուսահայ նորագոյն աշխարհիկ լեզուի եւ գրականութեան հիմնադիրը համարուած է հաւատարմ Արուսեանը: 1841 թուականին է, որ նա գրեց իր «Վերք Հայաստանին», որով հայ գրականութեան մէջ բացեց մի նոր շրջան եւ սկիզբ դրեց աշխարհիկ նորագոյն վերակազմութեան: Այսպէս է արձանագրուած եւ ընդգծուած հայ գրականութեան պատմութեան մէջ: Այդ է եւ մեր բանասէր-ընթացողները, գրականութեան պատմագիրները եւ լուսարանութիւնն ու մեկնարանութիւնը հայ աշխարհիկ լեզուի եւ գրականութեան ծագման մասին: Այդ տեսակէտն էլ իշխում է մեր հասարակական պատմութիւն մէջ:

Այսօր, սակայն, առանձնապէս կարեւորութիւն ունի Հայոց գրականութեան պատմութեան համար այն էական հարցը, թէ ար-

դեօք Արուսեանի «Վերք Հայաստանին» պատմական վէպից առաջ չե՞ն եղել աշխարհարար լեզուով յորինուած գրքեր: Արդեօք Արուսեանից առաջ գրականութեան բնագաւառում հրատարակ չե՞ն եկել հեղինակներ եւ իրենց ձեռքում բարձր պահել աշխարհարարի դրօշը:

Մեր որոնումներն ու պրպտումները դրական պատասխան են տալիս: Այսօր մեր ձեռքի տակ ունենք մի նոր աղբիւր, որն ընդգծում է այն կարեւոր հանգամանքը, թէ, այո՛, Արուսեանից առաջ հրատարակ է եկել աշխարհիկ լեզուի մի դրօշակակիր, որը խորապէս գիտակցել է այն էական բողոքն, թէ անհրաժեշտ է գրել աշխարհաբար լեզուով, անհրաժեշտ է ժողովրդին տալ իրեն հասկանալի, խօսած լեզուով գրքեր: Այդ հասկացողութեամբ էլ նա ստեղծագործել է աշխարհիկ լեզուով, որպէս զի ժողովուրդը կարգապաշտ կարողանայ հեշտութեամբ հասկանալ եւ սիրով կարգալ մայրենի լեզուով գրուած գրքերը:

Այդ դրօշակիրը Զաֆարիա Մարտիրոսեան է, որ գրական հրատարակ է գալիս մեզանից 182 տարի առաջ եւ հայ գրականութեան նուիրում աշխարհիկ լեզուով մի գիրք, որի ճակատին կարդում ենք. «Ճշմարիտ իմատուքիւն»: Հրատարակ է գալիս նա ժ. դարի առաջին շրջանում, 1755 թուականին: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ հայ գրականութեան մէջ զրարարն էր տիրապետում, երբ գրականութիւնը հեռու էր ժողովրդից. նա հասարակութեան որոշ խաւի մի փոքրաթիւ դասակարգի, գլխաւորապէս եկեղեցականութեան սեփականութիւնն էր: Այդպէս էր գրականութեան պատկերը, որովհետեւ բացառապէս կենդանացած էր հայ կրօնաւորների ձեռքում եւ նուիրուած միայն կրօնական խնդիրներին: Ահա թէ ի՞նչու պատմաշրջանի գրականութեան մէջ չենք տեսնում ժողովրդի լեզուն եւ կեանքը, այլ կրօնաբարոյական նիւթեր: Հէնց դրանով էլ պիտի բացատրել այն հանգամանքը, որ աշխարհարար գրողները ո՛չ միայն յարգանք եւ հեղինակութիւն չէին վայելում, այլ եւ ենթակայ էին հալածանքներին:

Ահա մի այդպիսի մուսայլ ժամանակաշրջանում հրատարակ է գալիս Զաֆարիա դի